ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 09. 06. 01/35

ք. Երևան «24» մարտ 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Հ. Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Հանձնարարող, մի կողմից, և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը, ի դեմս համալսարանի ռեկտոր՝ Հ. Հովհաննիսյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Հանձնակատար, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Հանձնարարողը հանձնարարում է, իսկ Հանձնակատարը ստանձնում է իրականացնել ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի «1215 Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում» ծրագրի «12001.Օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդում» միջացառումն ըստ անբաժանելի մաս կազմող հավելվածի:

2. Պայմանագրի գինը

2.1 Սույն պայմանագրով Հանձնակատարին Ծառայությունը կատարելու համար նախատեսված գինը կազմում է մինչև՝ 141 720 000 (մեկ հարյուր քառասունմեկ միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

2.2 Հանձնարարողը Ծառայությունը կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Հանձնակատարի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. Վճարման կարգը

3.1 Հանձնարարողը սույն պայմանագրի 2.1 կետում նշված գումարը Հանձնակատարին կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2111-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

4.1 Հանձնակատարը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված Ծառայության իրականացումը:

4.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

4.3 Հանձնակատարը վճարումը կատարում է միայն Հանձնարարողի կողմից համապատասխան հանձնարարականը ստանալուց հետո:

4.4 Հանձնարարողի կողմից գումարները չվճարելու դեպքում Հանձնակատարը իրավունք ունի միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասը:

4.5 Հանձնակատարը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Պայմանագրով սահմանված միջոցառման մասին հաշվետվությունը պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածում սահմանված միջոցառման վերջնաժամկետում չներկայացնելու դեպքում հանձնակատարից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 2.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ դրույթներ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի գրավոր համաձայնությամբ:

7.3 Սույն պայմանագիրը կնքված է, հայերեն, երկու օրինակից, որոնք հավասարազոր են: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՂ	ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011033454	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ ք. Երևան, Ա.Մանուկյանի փ.1 <<Արարատ>> բանկ ԲԲԸ Հ/Հ 1510001995480100
Գլխավոր քարտուղար՝	Ռեկտոր՝
Հ.Հակոբյան	Հ.Տոկմաջյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված **2023թ. մարտի 24 -ին**
կնքված N 09. 06. 01/35 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնա-հատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Օտարերկրյա պետություններում հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդում	Համալսարանների և հայագիտական կենտրոնների հայագիտության դասավանդում և հետազոտությունների անցկացում, գիտաժողովների կազմակերպում: Ցուցանիշներ՝ Երկրների թիվը- 11, Կրթագիտական կառույցների թիվը- 13, Դասավանդողների թվաքանակը- 15, Դասընթացների քանակը- 20, Խորհրդաժողովների թիվը- 1, Հետազոտությունների և տպավորությունների թիվը -3:	ՀՀ ԿԳՄՍՆ-ի գրավոր ծանուցումներով՝ դրամական փոխանցումներ հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդման, հետազոտություններ կատարելու և գիտաժողովներ կազմակերպելու համար հետևյալ օտարերկրյա համալսարաններին. Չեխիայում Բռնոյի Մասարիկի համալսարան Ռումինիայում Բուխարեստի համալսարան Իտալիայում Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարան Իտալիայում Հռոմի Լա՛Սապիենցա համալսարան Ավստրիայում Զալցբուրգի համալսարան Գերմանիայում Պոտսդամի Լեփսիուսի տուն-թանգարանի ինստիտուտ Գերմանիայում Հալլեի ''Մեսրոպ'' հայագիտական հետազոտությունների կենտրոն ՌԴ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ Արգենտինայի Քենեդի համալսարան Ուրուգվայի Հանրապետության համալսարան Ուրուգվայի Ռոսարիո պետական համալսարան հետազոտություն Եգիպտոսի Կահիրեի համալսարան Իսպանիայի Մադրիդի համալսարան ՀՀ ԿԳՄՍՆ/ՀՀ դեսպանատների և տեղի կառույցների միջև գրավոր համաձայնության հիման վրա և ՀՀ ԿԳՄՍՆ-ի գրավոր	Հաշվետվություն (վճարման հանձնարարագրեր, բանկային փոխանցումներ)	25.12.2023	141.720.000

			ծանուցումներով հնարավոր են փոխանցումներ նաև այլ համալսարաններին, որոնց հետ ստորագրված փաստաթուղթը նախատեսելու է ֆինանսավորում 2023թ.:			
Ընդամենը՝ 141.720.000 (մեկ հարյուր քառասունմեկ միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ						

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՂ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011033454

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ

02698732

ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ

ք. Երևան, Ա.Մանուկյանի փ.1

<<Արարատ>> բանկ ԲԲԸ

Հ/Հ 1510001995480100

Ռեկտոր՝

_____ Հ. Հովհաննիսյան

(ստորագրություն)

Կ.Տ

01506928